© Սույն տեքստը և այն վերահրապարակելու թույլտվությունը տրամադրվել է «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Դատարանի տվյալների բազա HUDOC-ում ընդգրկելու համար: [Թարգմանությունն արդեն իսկ հրապարակվել է www.echr.am կայքում]
© The present text and the authorisation to republish it were granted by the "Translation Center of the Ministry of Justice of the Republic of Armenia" SNCO for the purpose of its inclusion in the Court's database HUDOC. [Translation already published in www.echr.am]
© La traduction et l'autorisation de republier ont été accordées par la "Centre de Traduction du Ministère de la Justice d'Arménie" SNCO à son inclusion dans la base de données HUDOC de la Cour. [La traduction déjà publiée sur www.echr.am]

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«ՖԻԼ» ՍՊԸ-Ն ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 18526/13)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

31 հունվարի 2019թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

«Ֆիլ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos]՝ *Նախագահ,*

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Յովան Իլեւսկի [Jovan Ilievski],

Ջիլբերտո Ֆելիչի [Gilberto Felici]՝ *դատավորներ*,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2019 թվականի հունվարի 8-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն «Ֆիլ» ՍՊԸ-ի (դիմումատու ընկերություն) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2013 թվականի մարտի 5-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 18526/13) հիման վրա:

2. Դիմումատու ընկերությունը ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Ա. Կիվիրյանը, պրն Տ. Եգորյանը, տկն Լ. Հակոբյանը եւ տկն Դ. Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

3. Դիմումատու ընկերությունը պնդել է, որ 2008 թվականին հարուցված

քաղաքացիական վարույթի տեւողությունը եղել է չափազանց երկար, եւ այս մասով առկա չի եղել իրավական պաշտպանության որեւէ արդյունավետ ներպետական միջոց:

4. 2017 թվականի հունիսի 7-ին գանգատի մասին ծանուցումն ուղարկվել է Կառավարություն:

ՓԱՍՏԵՐԸ

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատու ընկերությունը մասնավոր ընկերություն է, որը հիմնադրվել է 2007 թվականին եւ գտնվում է Երեւանում:

6. 2007 թվականի մայիսի 7-ին դիմումատու ընկերությունը եւ «Ս.» ընկերությունը կնքել են պայմանագիր, որի շրջանակներում դիմումատու ընկերությունը պետք է իրականացներ շինարարական աշխատանքներ «Հ.» ընկերության տարածքում:

7. 2008 թվականի հունվարի 18-ին դիմումատու ընկերությունը Երեւանի քաղաքացիական դատարանում (Քաղաքացիական դատարան) հարուցել է փոխհատուցման վարույթ «Ս.» ընկերության դեմ՝ պնդելով, որ այն [դիմումատու ընկերությունը] ավարտել է 2007 թվականի մայիսի 7-ին կնքված պայմանագրով սահմանված շինարարական աշխատանքները, սակայն «Ս.» ընկերությունն ամբողջությամբ չի վճարել կատարված աշխատանքների համար:

8. 2008 թվականի հունվարի 21-ին Քաղաքացիական դատարանն ընդունել է դիմումատու ընկերության հայցը:

9. 2008 թվականի փետրվարի 20-ին Քաղաքացիական դատարանը նշանակել է «Հ.» ընկերության տարածքում դիմումատու ընկերության կողմից իրականացված շինարարական աշխատանքների դատատեխնիկական փորձաքննություն եւ կասեցրել է վարույթը: Փորձաքննությունը հանձնարարվել է Արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության

փորձագիտական կենտրոն»-ին (Փորձագիտական կենտրոն): Մասնավորապես, դատարանը փորձագետներին հանձնարարել է չափել շինարարական աշխատանքների տարածքի մակերեսը եւ գնահատել կատարված շինարարական աշխատանքների որակը:

10. 2008 թվականի մարտի 11-ին դատական փորձաքննության իրականացման համար պատասխանատու փորձագետը Քաղաքացիական դատարանին ներկայացրել է գրություն՝ նշելով, որ անհրաժեշտ է, որ Քաղաքացիական դատարանն ապահովի իր մուտքը «Հ.» ընկերության տարածք՝ փորձաքննությունն իրականացնելու նպատակով, քանի որ ընկերությունը քաղաքացիական վարույթի կողմ չէր:

11. 2008 թվականի ապրիլի 4-ին Քաղաքացիական դատարանը վերսկսել է վարույթը եւ «Հ.» ընկերությանը ներգրավել է վարույթին՝ որպես երրորդ կողմ:

12. 2008 թվականի մայիսի 15-ին Քաղաքացիական դատարանը նշանակել է շինարարական աշխատանքների դատատեխնիկական փորձաքննություն «Հ.» ընկերության տարածքում եւ նորից կասեցրել է վարույթը:

13. 2008 թվականի հոկտեմբերի 28-ին փորձագետը ներկայացրել է եզրակացություն, որ «Հ.» ընկերության տարածք մուտք գործելու հնարավորության բացակայության պատճառով հնարավոր չի եղել իրականացնել 2008 թվականի մայիսի 15-ին Քաղաքացիական դատարանի կողմից նշանակված դատական փորձաքննությունը:

14. 2008 թվականի նոյեմբերի 19-ին Քաղաքացիական դատարանը վերսկսել է վարույթը:

15. 2009 թվականի փետրվարի 19-ին Քաղաքացիական դատարանը բավարարել է դիմումատու ընկերության հայցը:

16. 2009 թվականի փետրվարի 27-ին դատական համակարգի վերակազմակերպման արդյունքում Քաղաքացիական դատարանը որոշել է գործը հանձնել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանին:

17. 2009 թվականի մարտի 4-ին «Ս.» ընկերությունը բողոքարկել է 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռը:

18. 2009 թվականի ապրիլի 23-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության՝ *inter alia* (ի թիվս այլնի) պատճառաբանելով, որ վիճարկվող շինարարական աշխատանքների առնչությամբ Քաղաքացիական դատարանի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ փորձագիտական եզրակացության բացակայության պարագայում այդ վճիռն անհիմն էր:

19. 2009 թվականի հուլիսի 29-ին Երեւան քաղաքի Շենքավիթ վարչական շրջանի դատարանը (Վարչական շրջանի դատարան) դիմումատու ընկերության գործն ընդունել է քննության:

20. 2009 թվականի օգոստոսի 26-ին Վարչական շրջանի դատարանը նշանակել է «Հ.» ընկերության տարածքում շինարարական աշխատանքների դատատեխնիկական փորձաքննություն եւ կասեցրել է վարույթը:

21. 2010 թվականի մայիսի 31-ին փորձագետը ներկայացրել է եզրակացություն, որ «Հ.» ընկերության տարածք մուտք գործելու հնարավորության բացակայության պատճառով հնարավոր չի եղել իրականացնել 2009 թվականի օգոստոսի 26-ին Վարչական շրջանի դատարանի կողմից նշանակված դատական փորձաքննությունը:

22. 2010 թվականի հունիսի 7-ին Վարչական շրջանի դատարանը վերսկսել է վարույթը:

23. 2010 թվականի հուլիսի 16-ին Վարչական շրջանի դատարանը նշանակել է «Հ.» ընկերության տարածքում շինարարական աշխատանքների դատատեխնիկական փորձաքննություն: Դատարանը կարգադրել է, որ դատական փորձաքննությունն իրականացվի Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ԴԱՀԿ) աջակցությամբ: Պարզ չէ, թե այդ կարգադրության արդյունքն ինչ է եղել:

24. 2012 թվականի հունիսի 21-ին փորձագետը ներկայացրել է եզրակացություն, որ «Հ.» ընկերության տարածք մուտք գործելու հնարավորության բացակայության պատճառով հնարավոր չի եղել իրականացնել 2010 թվականի հուլիսի 16-ին Վարչական շրջանի դատարանի կողմից նշանակված դատական փորձաքննությունը:

25. 2012 թվականի հունիսի 27-ին Վարչական շրջանի դատարանը վերսկսել է վարույթը:

26. 2012 թվականի հոկտեմբերի 3-ին դիմումատու ընկերությունը Վարչական շրջանի դատարան է ներկայացրել լրացուցիչ փաստարկներ:

27. Նույն օրը Վարչական շրջանի դատարանը նշանակել է «Հ.» ընկերության տարածքում շինարարական աշխատանքների դատատեխնիկական փորձաքննություն եւ կասեցրել է վարույթը:

28. 2014 թվականի նոյեմբերի 25-ին եւ դեկտեմբերի 24-ին դիմումատու ընկերությունը Փորձագիտական կենտրոն է ներկայացրել գրություն՝ հարցում կատարելով Վարչական շրջանի դատարանի կողմից նշանակված փորձաքննության ընթացքի մասին:

29. 2014 թվականի դեկտեմբերի 27-ին Փորձագիտական կենտրոնը պատասխանել է՝ նշելով, որ նշանակված փարձաքննությունը չի իրականացվել՝ ոլորտում համապատասխան փորձագետի բացակայության պատճառով: Փորձագիտական կենտրոնը նաեւ նշել է, որ արդեն համալրել եւ վերապատրաստել է համապատասխան փորձագետներ, եւ որ փորձաքննությունը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի հունվարին:

30. 2015 թվականի փետրվարի 28-ին դիմումատու ընկերությունը Փորձագիտական կենտրոն է ներկայացրել մեկ այլ գրություն՝ հիշեցնելով, որ փորձաքննությունը դեռ չի իրականացվել, եւ կենտրոնին տեղեկացնելով փորձաքննությունը չիրականացնելու հետեւանքով քաղաքացիական վարույթը ձգձգվելու մասին:

31. 2015 թվականի մայիսի 5-ին դիմումատու ընկերությունը գրություն է ներկայացրել Արդարադատության նախարարություն՝ բողոքելով քաղաքացիական վարույթի ձգձգումների առնչությամբ եւ խնդրելով միջոցներ ձեռնարկել այն արագացնելու համար:

32. 2015 թվականի մայիսի 20-ին Արդարադատության նախարարը պատասխանել է, որ թեեւ փորձաքննության իրականացումը կարող էր տեւել մեկ օր եւ մոտավորապես հինգ օր անհրաժեշտ էր եզրակացությունը պատրաստելու համար, փորձաքննությունը չի իրականացվել Փորձագիտական կենտրոնում փորձագետ չլինելու, փորձագետի՝ «Հ.» ընկերության տարածք մուտք գործել չկարողանալու, Փորձագիտական կենտրոնի չափից շատ ծանրաբեռնված լինելու եւ այլ պատճառներով: Նախարարը եզրափակել է՝ նշելով, որ Փորձագիտական

կենտրոնը կարող է այն իրականացնել, եթե փորձագետին թույլ տան մուտք գործել նշված տարածք:

33. 2015 թվականի հունիսի 30-ին, հավանաբար, տեխնիկական փորձաքննությունն իրականացնելուց հետո Փորձագիտական կենտրոնը համապատասխան փորձագիտական եզրակացությունն ուղարկել է Վարչական շրջանի դատարան:

34. 2015 թվականի հուլիսի 9-ին Վարչական շրջանի դատարանը վերսկսել է վարույթը:

35. 2015 եւ 2016 թվականներին Վարչական շրջանի դատարանը անցկացրել է մի շարք դատական նիստեր, եւ 2016 թվականի հունիսի 9-ին եւ օգոստոսի 2-ին այն նաեւ որոշել է իրականացնել գործի նոր քննություն:

36. 2016 թվականի հոկտեմբերի 10-ին Վարչական շրջանի դատարանը մասամբ բավարարել է դիմումատու ընկերության հայցը:

37. 2016 թվականի դեկտեմբերի 15-ին «Ս.» ընկերությունը բողոքարկել է վճիռը:

38. 2017 թվականի մարտի 23-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը եւ անփոփոխ է թողել վիճարկվող վճիռը:

39. 2017 թվականի մարտի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք չի ներկայացվել, եւ այն դարձել է վերջնական:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

40. Դիմումատու ընկերությունը բողոքել է, որ վարույթի տեւողությունը չի համապատասխանել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված

«ողջամիտ ժամկետի» պահանջին, որն այնքանով, որքանով վերաբերելի է, շարադրված է հետեւյալ բովանդակությամբ.

> «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... տրիբունալի կողմից ողջամիտ ժամկետում ... լսումների իրավունք»:

41. Դիմումատու ընկերությունը նաեւ բողոքել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման հետ կապված՝ նա չի ունեցել իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց, ինչը Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում է, որը շարադրված է հետեւյալ կերպ՝

> «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Ա. Կողմերի փաստարկները

42. Կառավարությունը պնդել է, որ դիմումատու ընկերությունն ունեցել է 6-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման հետ կապված իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց: Դա իրավական պաշտպանության միայն մեկ միջոց չէր, որը հասանելի էր, այլ մի քանի գործողությունների համակցություն, որոնց միջոցով դիմումատու ընկերությունը կարող էր արագացնել վարույթի ընթացքը: Մասնավորապես, դիմումատու ընկերությունը հնարավորություն է ունեցել դատարան ներկայացնել մեկ այլ փորձագիտական կազմակերպություն, որը կարող էր դատարանի կողմից նշանակված փորձագիտական գնահատումն ավելի արդյունավետ իրականացնել, սակայն դա չի արել: Ավելին, նա ձեռք չի բերել դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին դատարանների որոշումների համար կատարողական թերթ եւ այն չի ներկայացրել ԴԱՀԿ՝ հարկադիր կատարման համար: Եվ ի վերջո, դիմումատու ընկերությունը Վերաքննիչ քաղաքացիական դատարանում չի վիճարկել գործը քննող դատարանների՝ վարույթը կասեցնելու մասին որոշումները: Կառավարությունը պնդել է, որ քանի որ դիմումատու ընկերությունը չի կատարել վերոնշյալ գործողություններից որեւէ մեկը, գանգատը պետք է հայտարարվի անընդունելի՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն չսպառելու համար:

43. Դիմումատու ընկերությունը պնդել է, որ Կառավարության կողմից նշված գործողությունները չէին կարող համարվել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Ընկերությունը շարունակել է պնդել, որ քաղաքացիական վարույթի չափից ավելի երկար տեւողության համար չկան իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, եւ որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 13-րդ հոդվածի խախտում:

Բ. Դատարանի գնահատականը

1. Ընդունելիությունը

44. Հաշվի առնելով Կառավարության առարկությունը՝ Դատարանը համարում է, որ սույն գործով իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման հարցը սերտորեն կապված է դիմումատու ընկերության կողմից ներկայացված՝ ողջամիտ ժամկետում դատական քննության իր իրավունքի ենթադրյալ խախտման մասով իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չունենալու մասին իր բողոքի ըստ էության քննության հետ: Այսպիսով, Դատարանն անհրաժեշտ է համարում Կառավարության առարկության միացումը Կոնվենցիայի 13-րդ հոդվածի մասով բողոքի ըստ էության քննությանը (տե՛ս, օրինակ, *Անանյեվը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Ananyev and Others v. Russia*], թիվ 42525/07 եւ թիվ 60800/08, § 70, 2012 թվականի հունվարի 10):

45. Դատարանն այնուհետեւ համարում է, որ դիմումատու ընկերության՝ վարույթի չափից ավելի երկար տեւողության եւ իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցների բացակայության վերաբերյալ բողոքները Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չեն: Չեն հաստատվել այլ հիմքեր՝ դրանք անընդունելի ճանաչելու համար: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

2. Ըստ էության քննությունը

ա) Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը եւ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ենթադրյալ խախտումը

46. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորվում է ներպետական մակարդակով իրավական պաշտպանության միջոցի հասանելիությունը՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատություններն ապահովելու նպատակով՝ անկախ այն բանից, թե ինչ եղանակով են դրանք երաշխավորվում: Հետեւաբար այդ դրույթի նպատակն է պահանջել տրամադրել Կոնվենցիային համապատասխան իրավական պաշտպանության ներպետական միջոց՝ «փաստարկելի բողոքի» էության հետ գործ ունենալու համար, եւ տրամադրել դատական պաշտպանության արդյունավետ միջոց: Պայմանավորվող պետությունների՝ 13-րդ հոդվածին համապատասխան պարտավորությունների շրջանակը փոփոխվում է՝ դիմումատուի բողոքի բնույթից կախված: Այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության շրջանակում: 13-րդ հոդվածի իմաստով «իրավական պաշտպանության միջոցի» «արդյունավետությունը» չի ենթադրում դիմումատուի համար, անկասկած, դրական արդյունք: Ինչպես նաեւ չի ենթադրում, որ այդ դրույթում նշված «պետական մարմիններ»-ը լինեն դատական մարմիններ, սակայն եթե դրանք դատական մարմիններ չեն, ապա դրանց իրավասությունները եւ դրանց կողմից ապահովվող երաշխիքները վերաբերելի են նրանց կողմից տրամադրվող իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը որոշելիս: Բացի այդ, նույնիսկ եթե մեկ իրավական պաշտպանության միջոցն ինքնին չի համապատասխանում 13-րդ հոդվածի պահանջներին, ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցների ամբողջությունը կարող է ապահովել դա (տես Խլայֆան եւ այլք ընդդեմ Իտալիայի [ՄՊ] [*Khlaifia and Others v. Italy* [GC]], թիվ 16483/12, § 268, 2016 թվականի դեկտեմբերի 15):

47. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցների «արդյունավետությանը» վարույթի երկար տեւողությամբ գործերի դեպքում, Դատարանը գտնում է, որ լավագույն լուծումը, ինչպես շատ ոլորտներում, միանշանակ կանխարգելումն է: 6-րդ հոդվածի 1-ին կետով Պայմանավորվող պետությունները պարտավորվում են իրենց դատական համակարգերն այնպես կազմակերպել, որ դրանց դատարանները կարողանան բավարարել դրանով սահմանված պահանջներից յուրաքանչյուրը, այդ թվում՝ գործով լսումների իրականացումը՝ ողջամիտ ժամկետներում: Եթե դատական համակարգն այս առումով թերի է, ապա ամենաարդյունավետ լուծումը վարույթի չափից ավելի

երկարաձգումը կանխարգելելու նպատակով այն արագացնելու համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցի նախատեսումն է: Այսպիսի իրավական պաշտպանության միջոցն անհերքելի առավելություն ունի այնպիսի իրավական պաշտպանության միջոցի նկատմամբ, որն ապահովում է միայն փոխհատուցում, քանի որ այն ոչ միայն վերացնում է խախտումը *a posteriori* (հետագայում), ինչպես փոխհատուցման ձեւով իրավական պաշտպանության միջոցի դեպքում, այլ նաեւ կանխարգելում է նույն տեսակի վարույթների մասով հաջորդական խախտումների հայտնաբերումը: Հետեւաբար իրավական պաշտպանության այս տեսակն «արդյունավետ» է այնքանով, որքանով այն արագացնում է համապատասխան դատարանի որոշումը: Միեւնույն ժամանակ վարույթի ընթացքն արագացնելուն ուղղված իրավական պաշտպանության միջոցը չի կարող բավարար լինել այնպիսի իրավիճակը կարգավորելու համար, որի դեպքում վարույթն ակնհայտորեն չափազանց երկար է եղել: Նման իրավիճակում խախտումը կարող է պատշաճորեն վերացվել իրավական պաշտպանության միջոցների տարբեր տեսակների տրամադրմամբ, ներառյալ՝ փոխհատուցման ձեւով իրավական պաշտպանության միջոցը: Ավելին, պետությունները կարող են համակցել իրավական պաշտպանության երկու տեսակները, մեկը՝ նախատեսված վարույթի ընթացքը արագացնելու, իսկ մյուսը՝ փոխհատուցում տրամադրելու համար, թեեւ նրանք կարող են նաեւ որոշել ներդնել միայն փոխհատուցման ձեւով իրավական պաշտպանության միջոցը՝ առանց վերջինս անարդյունավետ համարելու (տե՛ս *Սկորդինոն ընդդեմ Իտալիայի* (թիվ 1) [ՄՊ] [*Scordino v. Italy (no. 1)* [GC]], թիվ 36813/97, §§ 183-187, ՄԻԵԴ 2006-V, եւ *Կոչիարելլան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Cocchiarella v. Italy* [GC]], թիվ 64886/01, §§ 74-78, ՄԻԵԴ 2006-V):

48. Դատարանը նշում է, որ սույն գործով վարույթի ձգձգումը եղել է տարբեր պատճառներով տեխնիկական փորձագիտական եզրակացությունը ժամանակին չներկայացնելու հետեւանքով, որն անհրաժեշտ էր գործի լուծման համար: Այդ պահանջը բավարարելը եղել է փորձաքննությունները նշանակող ներպետական դատարանների պատասխանատվությունը, ինչը հնարավոր էր իրականացնել՝ համապատասխան փորձագիտական կազմակերպությունն ընտրելով, իրենց իսկ կարգադրություններին հետեւելով եւ ապահովելով, որ այդ կարգադրություններն անհապաղ իրականացվեն, անհրաժեշտության դեպքում նաեւ հարկադիր կատարման միջոցով: Ավելին, պարզվել է, որ ժամանակին

փորձաքննություն չիրականացնելու հիմնական պատճառը եղել է այն, որ փորձագետները չեն կարողացել մուտք գործել «Հ.» ընկերության տարածք, որտեղ պետք է իրականացվեր փորձաքննությունը, թեեւ համապատասխան մարմինները փորձել են ապահովել այդ մուտքը ԴԱՀԿ-ի աջակցությամբ (տե՛ս վերեւում՝ 23-րդ պարբերությունը): Հետեւաբար պարզ չէ, թե ինչպես կարող էր Կառավարության կողմից առաջարկվող գործողությունների միջոցով կարգավորվել այդ իրավիճակը: Եվ, ի վերջո, Դատարանի համար պարզ չէ, թե ինչպես կարող էր վարույթը կասեցնելու մասին որոշումների վիճարկումն արագացնել նշված վարույթի ընթացքը՝ հաշվի առնելով այն փաստը, որ այդ որոշումները ոչ թե պահանջվող փորձաքննությունները չիրականացնելու պատճառն էին, այլ արդյունքը: Ավելին, բացի նրանից, որ վարույթը կասեցնելու մասին որոշումները Վերաքննիչ քաղաքացիական դատարանում վիճարկելը չէր կարող արագացնել վարույթի ընթացքը, այն ինքնին կարող էր դառնալ այդ վարույթները ձգձգելու գործոն (տե՛ս, օրինակ, *Եֆիմենկոն ընդդեմ Ուկրաինայի* [*Efimenko v. Ukraine*, թիվ 55870/00, § 64, 2016 թվականի հուլիսի 2006): Հետեւաբար Դատարանը համարում է, որ Կառավարության կողմից նշված գործողությունների համակցությունը Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով «իրավական պաշտպանության արդյունավետ միջոց» չէր վարույթի երկարաձգման դեմ:

49. Դատարանն այնուհետեւ նշում է, որ Կառավարությունը չի առաջարկել Հայաստանի ներպետական համակարգում տվյալ ժամանակահատվածում հասանելի որեւէ այլ ընթացակարգ, որը կարող էր նշված վարույթի ընթացքն արագացնող եւ/կամ արդեն արձանագրված ձգձգումների համար փոխհատուցում առաջարկող իրավական պաշտպանության արդյունավետ միջոց համարվել:

50. Ուստի Դատարանը մերժում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությունը եւ եզրակացնում է, որ դիմումատու ընկերությունը չի ունեցել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ նշված քաղաքացիական վարույթի տեւողության մասով:

51. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

բ) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

52. Դատարանը կրկին նշում է, որ վարույթի տեւողության ողջամտությունը պետք է գնահատվի՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից եւ հղում կատարելով հետեւյալ չափորոշիչներին. գործի բարդությունը, դիմումատուի եւ համապատասխան մարմինների վարքագիծը եւ այն, թե վեճի մեջ դիմումատուի համար որն է եղել խնդրո առարկան (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ֆրիդլենդերն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Frydlender v. France* [GC]], թիվ 30979/96, § 43, 2000 թվականի հունիսի 27):

53. Դիտարկվող ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է 2008 թվականի հունվարի 18-ից, երբ դիմումատու ընկերությունը Երեւանի քաղաքացիական դատարանում հարուցել է փոխհատուցման վարույթ, եւ ավարտվում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2017 թվականի մարտի 23-ի որոշմամբ: Այսպիսով, այն տեւել է ինը տարի եւ երկու ամիս՝ երեք ատյանների մակարդակով. առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանները գործը քննել են երկուական անգամ: Հարկ է նշել, որ յոթ տարի եւ հինգ ամիս տեւած ամենաերկարատեւ ձգձգումը տեղի է ունեցել 2009 թվականի ապրիլի 23-ից մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում, երբ գործն ընթացքի մեջ էր Վարչական շրջանի դատարանում, եւ կողմերը սպասում էին նշանակված փորձագիտական եզրակացությունը ստանալուն:

54. Դատարանը նշում է, որ սույն գործի երկարաձգումը դիմումատու ընկերությանը վերագրելի չէր: Փոխարենը, այն վերագրելի էր ներպետական դատարաններին, որոնք ինը տարվա ընթացքում նշանակել էին գործը լուծելու համար անհրաժեշտ հինգ տեխնիկական փորձաքննություն, սակայն չէին ապահովել դրանցից չորսի իրականացումը:

55. Դատարանն այնուհետեւ նշում է, որ գործն առանձնակի բարդության չի եղել: Այս առումով Դատարանն ընդգծում է, որ Արդարադատության նախարարությունից ստացված՝ 2015 թվականի մայիսի 20-ի գրության մեջ նշվել էր, որ պահանջվող տեխնիկական փորձաքննությունն անցկացնելը կտեւեր միայն մեկ օր, իսկ փորձագետի եզրակացությունը կազմելը՝ հինգ օր: Այնուամենայնիվ, ի սկզբանե 2008 թվականի փետրվարի 20-ին նշանակված փորձագիտական եզրակացությունը ավարտվել եւ Վարչական շրջանի դատարան էր ներկայացվել միայն 2015 թվականի հունիսի 30-ին:

56. Դատարանը բազմիցս հայտնաբերել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի

1-ին կետի խախտումներ այն գործերում, որոնցում բարձրացվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք՝ սույն գործում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Կապուանոն ընդդեմ Իտալիայի* [*Capuano v. Italy*], 1987 թվականի հունիսի 25, §§ 30-35, շարք Ա թիվ 119 եւ *Սյուրմելին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Sürmeli v. Germany* [GC]], թիվ 75529/01, §§ 128-134, ՄԻԵԴ 2006-VII):

57. Դատարանը, ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը, համարում է, որ սույն գործով այլ եզրակացության հանգելու համար Կառավարությունը համոզիչ փաստեր կամ փաստարկներ չի ներկայացրել: Հաշվի առնելով քննվող հարցի վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը համարում է, որ սույն գործում վարույթի տեւողությունը եղել է չափազանց երկար եւ չի բավարարել «ողջամիտ ժամկետի» պահանջը:

58. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

59. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

60. Դիմումատու ընկերությունը պահանջել է 4 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

61. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի պահանջը՝ այն չափազանց մեծ լինելու հիմքով:

62. Դատարանը համարում է, որ դիմումատու ընկերությունը պետք է որ կրած լինի ոչ նյութական վնաս: Առաջնորդվելով արդարության սկզբունքով՝

Դատարանն այդ մասով դիմումատու ընկերությանը շնորհում է 2 400 եվրո:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

63. Դիմումատու ընկերությունը նաեւ պահանջել է 860 եվրո՝ որպես հատուցում ներպետական դատարաններում կրած ծախսերի եւ ծախքերի համար, 2 220 եվրո՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար եւ 16 եվրո՝ փոստային ծառայությունների համար:

64. Կառավարությունը վիճարկել է պահանջը: Մասնավորապես, ներպետական դատարաններում կրած ծախսերի մասով, նրանք վիճարկել են, որ պահանջի եւ դիմումատու ընկերության իրավունքի ենթադրյալ խախտման միջեւ չկա պատճառահետեւանքային կապ:

65. Դատարանը համաձայնում է, որ ներպետական վարույթներում կրած ոչ մի ծախս չի առաջացել հայտնաբերված խախտումը կանխարգելելու կամ փոխհատուցում պահանջելու փորձից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ վարույթի անհիմն ձգձգումներն առաջացրել են դիմումատուի կրած ծախսերի աճ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Մորերն ընդդեմ Ավստրիայի* [*Maurer v. Austria*], թիվ 50110/99, § 27, 2002 թվականի հունվարի 17, եւ վերեւում հիշատակված՝ *Սյուրմելիի գործը*, §148), դիմումատու ընկերության պահանջն այդ մասով անհիմն չէ: Հետեւաբար հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 2 000 եվրո՝ որպես բոլոր պահանջների մասով կրած ծախսերի ու ծախքերի փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

66. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում* է գանգատն ընդունելի եւ Կառավարության՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին առարկության

քննությունը միացնում է բողոքի ըստ էության քննությանը.

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում եւ մերժում է ներպետական իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասին Կառավարության առարկությունը.

3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատու ընկերությանը վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 2 400 եվրո (երկու հազար չորս հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 2 000 եվրո (երկու հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

5. Մերժում է դիմումատու ընկերության՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի հունվարի 31-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս	Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս
Քարտուղար	Նախագահ